

# **Sol՝ Հայաստանի Անկախութեան Մեր Առաջին Հանրապետութիւնը Մայիս 28, 1918**

Բոլոր ժողովուրդներուն համար, հայրենական մեծագոյն տօնը՝  
Անկախութեան Օրն է:

Ամենէն սիրելին եւ նուիրականն է ան:

Այդ օրը՝ տօն է ազգային երազներու իրականացման կարելորագոյն  
հանգրուանին. պսակումը՝ թափուած հաւաքական ճիգերու եւ երկարատեւ  
պայքարներու:

Ան կը հետեւի անձկալից սպասումներու, անսահման  
զոհաբերութեանց. անոր համար մեծ թիւով հայրենասէրներ կատարած են  
գերագոյն զոհողութիւն, նուիրած՝ իրենց կեանքը:

Sol՝ որուն իրականացման առիթով գործուած են եւ գրուած  
պատմական հերոսութիւններ:

Արդար ուրախութեան Օր է ան:

Օր՝ հպարտութեան եւ երջանիկ զգացումներու:

Խորհրդանիշ է ան.

Հաւաքական անձնագիր եւ անցագիր:

Անո՛վ է, որ մուտք կը գործէ ան Միացեալ Ազգերու

կազմակերպութիւն:

Օր՝ որ արժեչափ է մեծաթիւ եւ փոքրաթիւ ազգութիւններու  
հաւասարութեան:

Կը ճշդէ տեղը, դերը անոր կեանքին մէջ:

Կը հաստատէ գոյնը, բոյրը ազգութեանց մէջ:

Գեղեցկութիւն է ան ու արժէք:

Անով եւ նմաններով է մեծ ու պատկառելի ընտանիքը ազգերուն:

Պատգամ է ան ու յանձնառութիւն՝ միշտ կանգուն, բայց եւ անելի  
բարձր դիրքի վրայ պահպանելու այն, ինչպէս ուխտ եւ պարտաւորութիւն:

\* \* \*

Մինչեւ իրենց անկախութիւնը, բոլոր ժողովուրդներն ալ ապրած ու  
անցած են հաւաքական կեանքի պատմութեան դժուարին հանգրուաններ՝  
Նահապետական, Տոհմային, Ցեղային, Ցեղապետական,  
Իշխանապետական, Թագաւորական եւայլն:

Ղեկավարման այդպիսի դրութիւններով, հայ ժողովուրդի հնագոյն  
պատմութիւնը կը հասնի մինչեւ Զ.Ա. 9րդ, 8րդ դարերը, երբ այլեւս կը սկսին  
ձեւաւորուիլ թագաւորութիւններու յաջորդականութեան  
պատմաշրջանները:

\* \* \*

Արձանագրեց հայ ժողովուրդի պատմաշրջաններու կարելոր  
հանգրուանները:

- Նայիրեան ցեղային միութիւն՝ գոյացած Զ.Ա. ԺԳ.-էն ԺԱ. դարերուն:

- Ուրարտական պետության կազմալուծում եւ տեւողութիւն Զ.Ա. 870-590:
- Մայրաքաղաք Էրեբունի-Երեւանի հիմնադրութիւն. Զ.Ա. 782 թուին:
- \* Երուանդեաններու թագաւորութեան շրջան. Զ.Ա. 570-190:
- \* Արտաշիսեան թագաւորութեան շրջան՝ Զ.Ա. 190-Զ.Ե. 1:
- Այս ժամանակաշրջանին յիշատակելի է հայոց պատմութեան մեծագործ թագաւոր՝ Մեծն Տիգրանը. Զ.Ա. 95-55:
- \* Արշակունեաց թագաւորութեան շրջա. 2Էն 428:
- Այս ժամանակաշրջանին յիշատակելի են հետեւեալ պատմական իրողութիւնները.
  - Պետականօրէն կ'ընդունուի քրիստոնէութիւնը՝ Տրդատ թագաւորի եւ Ս. Գրիգոր Լուսաւորչի օրով. 301 թուին:
  - Կը կատարուի հայ գրերու գիւտը՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի, Ս. Սահակ հայրապետի եւ Վռամշապուհ թագաւորի օրով. 405 թուին:
  - Նոյն թուականներուն կը սկսի հայ ժողովուրդի Գրաւոր մշակոյթը, կը թարգմանուի Աստուածաշունչը եւ պատմահայր Մովսէս Խորենացին կը գրէ ամբողջական պատմութիւնը հայ ժողովուրդի:
  - \* Բագրատունեաց թագաւորութեան շրջան. 870-1045:
  - \* Ռուբինեան իշխաններու եւ Լուսինեան թագաւորներու շրջան.
- 1080-1375:
- \* Առաջին Զանրապետութեան շրջան. 1918 Մայիս 28Էն մինչեւ 1920 Դեկտեմբեր 2:
- \* Երկրորդ Զանրապետութեան շրջան (Զ.Ս.Ս.Զ.) 1920 Դեկտեմբեր 2Էն 1991 Սեպտեմբեր 20:
- \* Երրորդ՝ Ներկայի Զանրապետութեան շրջան. 1991 Սեպտեմբեր 21Էն սկսեալ:

\* \* \*

Տրուած թուականներուն միջեւ պատմութեան ժամանակամիջոցները յաճախ եղած են կիսանկախութեան կամ ենթակայութեամբ տիրապետուած շրջաններ:

Այդ միջոցներուն, հայ ժողովուրդը միշտ պայքարած է օտար բռնութիւններուն դէմ, որոնք գլխաւորաբար եղած են յունահռոմեական, ասորական, պարսկական, արաբական, մոնկոլ-թաթարական, թրքական, ռուսական եւայլն:

Յայ ժողովուրդի պատմութեան մէջ, Բագրատունեաց թագաւորութեան անկումով՝ **1045 թուին**, եւ այնուհետեւ Կիլիկիոյ թագաւորութեան անկումով՝ **1375ին**, պատմական Զայաստանի ամբողջ տարածքը դարերով ենթակայ կը դառնայ յոյն, մոնկոլ, թաթար, օսմանեան թուրք, պարսիկ եւ ռուս բռնատիրութիւններու:

Օտար ուժեր կը մասնատեն ամբողջ երկիրը. անխնայ կը կողոպտեն զայն, կը կեղեքեն ժողովուրդը եւ արգելք կ'ըլլան անոր տնտեսական, ընկերային, մշակութային կեանքի բնական յառաջդիմութիւններուն:

Մասնաւորեմբ, որ բռնատիրութիւններու ամենէն երկարատեւն ու դաժանը կ'ըլլայ Օսմանեան թուրքերու տիրապետութիւնը Արեւմտեան Զայաստանի տարածքներուն վրայ:

Դժնդակ այս ժամանակաշրջանին է, որ հայ ժողովուրդի գոյավիճակը իբրև հարց սիւթ կը դառնայ երոպական պետութիւններու ժողովներուն:

Դարձեալ, հայ ժողովուրդի անմարդկայնօրէն ճնշուած եւ տխուր վիճակն է, որ ի միջի այլոց Ռուսաստան պատճառ կը նկատէ Թուրքիոյ դէմ պատերազմելու:

Օսմանեան պետութիւնը սակայն առանց կարեւորութիւն տալու երոպացիներու ճնշումներուն, ինչպէս նաեւ Ռուսաստանի սպառնալիքներուն, միշտ կը դիմէ ահաւոր միջոցառումներու, հայկական հողերու հարցը եւ ժողովուրդին պահանջները իր հասկացողութեամբ լուծելու:

- 1895-96ին՝ 300,000 հայերու կոտորած կ'իրականացնէ եւ կը մղէ ժողովուրդը արտագաղթելու:

- 1909ին՝ կ'ահաբեկէ Կիլիկիոյ հայութիւնը, մէկ օրուան մէջ 30,000 հայեր կոտորելով եւ կողոպտելով ժողովուրդի առեւտրատներու եւ բնակարաններու հարստութիւնը, ինչ որ դարձեալ արտագաղթի ստիպողութեան մէջ կը դնէ մնացեալ ժողովուրդը:

Այս բոլորէն ետք,

- 1913 թուին, վերջապէս կը սկսին երոպական ճնշումներով հայ ժողովուրդի կեանքի բարելաւման միջոցառումները հայկական նահանգներուն մէջ:

- 1914ին սակայն, սկսուած բարեկարգութեանց գործընթացը կ'ընդհատուի, որովհետեւ կը ծագի Զամաշխարհային Առաջին պատերազմը:

Չուգադիպութիւնը դժբախտաբար կ'ըլլայ ի նպաստ Օսմանեան պետութեան, որ յարմար առիթը կը սեպէ ձերբազատուելու երոպական միջամտութիւններէն, Զայկական Զարցը լուծելու իր ձեռքով եւ իր հայեցողութեամբ:

- 1915ին, կարճ ժամանակամիջոցի մը մէջ, սկսեալ Ապրիլի 24էն, պետութիւնը անակնկալ կերպով կը ձերբակալէ եւ անմիջապէս կ'աքսորէ հարիւրաւոր գրողներ, մտաւորականներ, քաղաքական-հասարակական յայտնի գործիչներ, մասնագէտներ, եկեղեցականներ եւ այլք:

Նոյն ատեն, զինուորագրութեան կ'ենթարկէ մինչեւ 45 տարեկան բոլոր այր մարդիկը:

Այնուհետեւ՝ կը սկսի հայ բնակիչներու ստիպողական տեղահանութիւնը:

\* \* \*

1917ի սկիզբը, դարձեալ Զամաշխարհային Ա. պատերազմի տարիներուն, տեղի կ'ունենայ պատմական մեծ յեղաշրջում մը. Կարմիր Յեղափոխութիւն Ռուսիոյ մէջ, որուն հետեւանքները ճակատագրական անդրադարձ կ'ունենան հայ ժողովուրդին վրայ:

Ռուսաստանի ցարը գահընկեց կ'ըլլայ: Զամայնավարական յեղափոխութիւնը կը յաղթահարէ եւ տեր կը դառնայ ընդարձակ կայսրութեան:

Նոր իշխանութիւնները կը հրահանգեն, որ ռուս բանակը լքէ Կովկասը, որուն մէջ ներկայ Զայաստանը, Կարսն ու Արտահանը եւ քաշուիլ դէպի Ռուսաստան:

Այդ պայմաններուն մէջ, Արեւելեան Հայաստանը կը մնայ անպաշտպան:

Թուրքիան պատեհ առիթ կը նկատէ գրաւել ռուսերու լքած հողերը, հոն եւս բնաջնջել հայը եւ վերջնականապէս ազատիլ Հայկական Հարցէն:

Ահա տուեալ այս պայմաններուն մէջ,

- Մէկ կողմէն Համաշխարհային Ա. պատերազմը,

- Միւս կողմէն Ռուսաստանի մէջ համայնավարական

յեղափոխութիւնը, շարժառիթ եւ պատճառ կ'ըլլան, որ հայ ժողովուրդը դրուի իր պատմութեան ամենէն վտանգաւոր հարցականին առջեւ:

Թուրք բանակը կը շարժի դէպի Կովկաս, ուր առաջին հերթին ծրագրէ իրականացնել Արեւելահայութեան հաշուեյարդարի գործը:

Այդ վտանգին առջեւ, տարածքի հայ ղեկավարութիւնը ռուս բանակի մեկնումէն ետք, անյապաղ կը լծուի աշխատանքի, կազմակերպելու համար զօրագունդեր եւ ժողովուրդի ինքնապաշտպանութիւնը:

Թուրք բանակը մօտեցած՝ տեղի կ'ունենան սպասուած ճակատագրական բախումները, երեք ուղղութիւններու վրայ, երեք կէտերու մէջ.

- Սարդարապատ,

- Բաշ Ապարան,

- Ղարա Զիլիսա (Ներկայիս Սպիտակ):

Բախումներու անմիջականութիւնը կը ստեղծէ մեծ անձկութիւն եւ անսովոր աշխուժութիւն:

Ամէն ոք կը ջանայ հաստատել յանուն հայրենիքի գոհաբերութեան իր անկեղծ պատրաստակամութիւնը: Բոլորին համար ճակատամարտները **սրբազան մարտի** բնոյթ կ'ընկալուին:

Երեք ճակատներու վրայ, կ'ըլլայ հետեւեալ դասաւորումը.

- Սարդարապատի ճակատամարտ. ղեկավար՝ Զօրավար Դանիէլ Բեգ Փիրումեան:

- Բաշ Ապարանի ճակատամարտ. հրամանատար՝ Դրաստամատ Կանայեան. Դրօ:

- Ղարաքիլիսայի ճակատամարտ. զօրավար՝ Թովմաս Նազարբեգեան:

Բոլոր ղեկավարները հայրենասիրական վերջին կոչ մը կ'ուղղեն բանակին եւ ժողովուրդին. կը յստակացնեն, որ մահու եւ կենաց վճռորոշ բախումի մը առաջ կ'երթան: Ընդհանուր մթնոլորտը կը յիշեցնէ հինգերորդ դարու Վարդանանց հայրենական պատերազմը:

Ժողովուրդը գիտակից այդ բոլորին, սքանչելի միասնակամութեամբ, գերազանց խանդավառութեամբ եւ բարձր կորովով, հերոսաբար կը կռուի նախայարձակ թշնամիին դէմ:

Թրքական բանակը պարտուած՝ փախուստ կու տայ...

Հուսկ՝ կը կերտուի դժուարին յաղթանակը:

\*

Տազնապալի այսպիսի պահերու մեջ՝ ճակատներու վրայ կռիւ ու պատերազմ, անդին՝ Թիֆլիսի մէջ, տեղի կ'ունենան քաղաքական անակնկալներ:

- Ռուս բանակի մեկնումէն ետք, Կովկասի ամբողջ տարածքը, որ կը կառավարուէր երեք ժողովուրդներու ՍԷՅՄ կոչուած դաշնակցային կառավարութեան մը կողմէ, որ կը կոչուէր ՍԷՅՄ, կը կազմալուծուի:

26 Մայիսին, վրացիները յանկարծ կը քաշուին ՍԷՅՄ-էն եւ կը յայտարարեն Վրաստանի Հանրապետութեան Անկախութիւնը:

Ատրպէյճանցիները նոյնպէս կը լքեն ՍԸՅՄը եւ կը յայտարարեն Ատրպէյճանի Անկախութիւնը:

Հայոց Ազգային Խորհուրդը Թիֆլիսի մէջ, ստեղծուած կացութիւնը նկատի առած, եւ հաստատելէ ետք, որ ՍԷՅՄ-ը արդէն իսկ քայքայուած է, հայ քաղաքական բոլոր հատուածներուն եւ կազմակերպութեանց հաւանութիւնը առնելէ ետք, յանուն հայ ժողովուրդին ինք եւս կ'որոշէ պաշտօնապէս յայտարարել Հայաստանի Հանրապետութեան Անկախութիւնը:

Աւետիս Ահարոնեան, Նիկոլ Աղբալեան եւ Յովհաննէս Քաջազունի կը բանաձեւեն հետեւեալ յայտարարութիւնը, որ իբրեւ պատմական հռչակագիր, կը կարդացուի եւ կը հրապարակուի 1918-ի Մայիսի 28-ի օրը, կէսօրուան ժամը 12-ին.

- Սիրելի ժողովուրդ,

«Անդրկովկասի քաղաքական ամբողջականութեան լուծումով եւ Վրաստանի եւ Ատրպէյճանի անկախութեան հռչակումով ստեղծուած նոր դրութեան հանդէպ Հայոց Ազգային Խորհուրդը իրեն յայտարարած է հայկական գաւառներու գերագոյն եւ միակ իշխանութիւնը: Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մօտիկ օրերում կազմել հայոց կառավարութիւն՝ Ազգային Խորհուրդը ժամանակաւորապէս ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական գաւառների քաղաքական եւ վարչական ղեկը վարելու համար»:

## ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ

Արիւնալի ճակատամարտներէն եւ հպարտալի յաղթանակներէն ետք, հայ ժողովուրդը կը դրուի ազգային իր մեծ երազի իրականութեան առջեւ.

ժողովուրդը մեծ նեղութիւններու մէջ է:

- Արեւմտեան Հայաստանի ցեղասպանութենէն ճողոպրած՝ շուրջ 300,000 գաղթականներ անօթի, հիւանդ, անգործ, անպատսպար՝ լեցուցած են երկիրը:

- Դժուար է նոյնիսկ ուտելիք գտնելը:

- Նիւթականի տագնապը՝ մեծ:

- Կը բացակային կառավարման գրեթէ բոլոր մարզերը:

- Չկայ բաւարար ոստիկանական ուժ՝ օրէնքի եւ ապահովութեան հսկողութիւն ապահովելու:

- Տազնապ՝ ե՛ւ ընկերային, ե՛ւ տնտեսական, ե՛ւ քաղաքական:

- Տեղացի Թուրք-ատրպէյճանցի բնակիչներ կը կատարեն քաղաքային անկանոնութիւններ. կը խռովեն ընդհանուրի անդորրութիւնը:

- Չկայ կրթա-դպրոցական դրութիւն:

- Չկան առողջապահական, ընկերային, բարեսիրական բաւարար օգնութիւններ:

Քաղաքական քաղաքացիական կեանքը՝ պիտի սկսեր ոչինչէն:

Այս տխուր պատկերին դեմ, **անկախութեան գաղափարը** կը մնայ ժողովուրդին **մեծագոյն յոյսը**:

Հայ քաղաքական միտքը կը սկսի աշխոյժ եւ հարուածային աշխատանքներու, ժողովուրդի կեանքը վերակազմակերպելու եւ ստեղծելու բնականոն վիճակ ամեն մարզի մէջ:

\* \* \*

Շուրջ երկու տարուան շրջանի մը մէջ, կը կատարուի զգալի բարեփոխութիւն, նորահաստատ հանրապետութեան կեանքի բոլոր մարզերուն մէջ:

Կը ստեղծուի խորհրդարան, օրինապահ ուժ, նախարարութիւններ, պաշտօնէութիւն՝ անհրաժեշտն ու անմիջական ծառայութիւնները մատուցելու համար ժողովուրդին:

Կ'աշխուժանայ քաղաքական կեանքը: Խորհրդարանը կը սկսի կանոնաւոր ժողովներ գումարել, կը մշակուին նոր օրէնքներ, կը կազմուին նոր կառավարութիւններ:

Երկրին մէջ դժուարութիւնները յաղթահարելու համար, իրարու կը յաջորդեն վեց կառավարական դահլիճներ:

**Առաջին դահլիճը**՝ վարչապետութեամբ Յովհաննէս Քաջազնունիի: Նախարարներ՝ Ալեքսանտր Խատիսեան, Արամ Մանուկեան, Խաչիկ Կարծիկեան, Չօրավար Յ. Հախվերդեան, Արտաշէս Բաբայեան:

**Երկրորդ դահլիճը**՝ դարձեալ վարչապետութեամբ Յովհ. Քաջազնունիի: Նախարարներ՝ Ս. Տիգրանեան, Արամ Մանուկեան, Չօրավար Յ. Հախվերդեան, Էնֆիաճեան, Ս. Յարութիւնեան, Ս. Աթաբէկեան, Լ. Ղուկեան, Խ. Կարծիկեան եւ Չօրավար Քր. Արարատեան, որ կը փոխարինէ Չօրավար Հախվերդեանը:

**Երրորդ դահլիճը**՝ վարչապետութեամբ Ալեքսանտր Խատիսեանի: Նախարարներ Ս. Մանասեան, Չօրավար Քր. Արարատեան, Յ. Չմշկեան, Մելիք Ղարաբեօզեան, Ս. Թորոսեան, Զ. Վերմեշեան եւ Գ. Զաղէթեան:

**Չորրորդ դահլիճը**՝ դարձեալ վարչապետութեամբ Ալեքսանտր Խատիսեանի: Նախարարներ՝ Ա. Գիւլիանդարեան, Ս. Արարատեան, Ա. Սահակեան, Նիկոլ Աղբալեան եւ Չօրավար Քր. Արարատեան:

**Հինգերորդ դահլիճը**, որ կը կոչուի նաեւ Հ.Յ.Դ. Բիւրօ Կառավարութիւն, վարչապետութեամբ՝ Համօ Օհաջանեանի: Նախարարներ՝ Ռուբէն Տէր Միւսսեան, Ա. Գիւլիանդարեան, Արշակ Զամալեան, Սիմոն Վրացեան, Ս. Արարատեան եւ Գ. Ղազարեան:

**Վեցերորդ եւ վերջին դահլիճը**՝ վարչապետութեամբ Սիմոն Վրացեանի: Նախարարներ՝ Դրօ Կանայեան, Համբարձում Տէրտէրեան, Արշակ Խոնդկարեան, Արշակ Յովհաննիսեան եւ Վահան Միւսախորեան:

Հայաստանի Առաջին Անկախ Հանրապետության շրջանը վերջ կը գտնէ վեցերորդ դահլիճին օրով, անգամ մը եւս թրքական ներխուժումով, նաեւ՝ Համայնավար Ռուսաստանի կողմէ կազմակերպուած ներքին յեղափոխութիւններով եւ գիւնուորական ճնշումներով:

Հայաստանի կառավարութիւնը ակամայ իշխանութիւնը կը փոխանցէ համայնավար ղեկավարութեան՝ 1920 Դեկտեմբեր 2ին:

## ԻՐԱԳՈՐԾՈՒՄՆԵՐ

Շուրջ երկու եւ կէս տարուան կարճատեւ Հայկական Առաջին Հանրապետութեան կեանքին մէջ յիշատակութեան արժանի են, ի միջի այլոց՝ հետեւեալ իրագործումները.-

- Ռուսերու մեկնումով, երկրին էջ ստեղծուած գրեթէ անիշխանական վիճակին վերջ տրուելէ ետք, վերահաստատում քաղաքացիական կարգ ու կանոնի:

- **Հայերէնը** կը դառնայ պաշտօնական լեզուն, կառավարական եւ քաղաքացիական կեանքի բոլոր մարզերուն մէջ:

- Կը բացուին հարիւրաւոր հանրակրթարաններ, կը հաստատուին Նոյնիսկ գիշերային ժողովրդային դասընթացքներ՝ գիր-ընթերցում եւ լեզու ուսուցանելու:

- Մեծ թիւով տեղանուններ, որոնք դարերու ընթացքին պարսկական կամ թրքական անուններ ստացած էին, կը հայացուին:

1920 թուի Յունուարին, կրթական նախարար Նիկոլ Աղբալեանի ջանքերով կը հիմնուի պետական համալսարան:

Կը կազմակերպուին առողջապահական, բժշկական ծառայութիւնները:

Կը վերակազմուի բանակը. հայրենիքին ծառայելու գիւնուորագրութեան դրութիւնը:

Կը հաստատուի պետական Չինանշանը, որուն վրայի չորս մասերը կը խորհրդանշեն պատմական Հայաստանի վերջին չորս թագաւորութիւնները. Արտաշեսեան, Արշակունեան, Բագրատունեան եւ Ռուբինեան:

Կը ճշդուի հայկական դրօշի Եռագոյնը. կարմիր, կապոյտ եւ նարնջագոյն, իբրեւ հայկական պետականութեան խորհրդանիշ:

Գոյները կ'որոշուին կատարելէ ետք լուրջ ուսումնասիրութիւններ, որուն կը մասնակցին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Ե. հայրապետը, գիտնականներ Յ. Մանանդեան, Ստեփան Մալխասեանց եւ Էջմիածնէն հայագետներ:

Բազմաթիւ երկիրներու մէջ կը բացուին հայկական դեսպանատուներ:

1919 Յունիսին, 80 պատգամաւորներով (երեսփոխան) կը կազմուի առաջին խորհրդարանը:

Կը հիմնադրուին՝ թանգարան, գրադարաններ:

Բազմաթիւ գրողներ արտասահմանէն, մանաւանդ Թիֆլիսէն եւ Պաքուէն կը հաստատուին Հայաստան: Կը ստեղծուի գրական, մտաւորական շինիչ մթնոլորտ: Պետութիւնը կը սկսի հոգալ գրողներու ստեղծագործութեանց հրատարակութեան ծախսերը:

\* \* \*

**Անկախութեան** իրականացումը ուրախութեամբ տօնախմբելէ եւ անդրադառնալէ ետք այն բոլոր զոհողութիւններուն, որոնք կատարուած են մեր նախնիներուն կողմէ հայութեան մեծ երազը իրականացնելու համար, նորագոյն սերունդը պիտի մատածէ եւ որոշէ՝ գործնապէս ինչպէ՛ս ամրակայել վերանկախացած հայրենիքը եւ մանաւանդ՝ ինչպիսի՛ մասնակցութիւն բերել անոր յաղթական երթին:

## ՍԱՐՏԱՐԱՊԱՏ

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃԵԱՆ  
(1877-1956)

Այսօր, այս վեհ ուրախութեան եւ սուգի հանդեսին,  
Ով մարմարէ նահատակներ, կանգնած ձեզ հետ միասին,  
Ով խնկելի Սարտարապատ, Ղարաքիլիսա, Աբարան:

Խօսեցնում էք իմ բերան:

Սակայն ինչպէ՞ս խօսեմ ձեզ հետ՝ ցաւի դողը իմ շուրթիս,  
Իմ, ապրողիս խղճի խայթով՝ մեռածներիդ յանդիման,  
Ինչպէ՞ս հնչեմ ձեր անունը՝ ամօթանքը ճակատիս,

Գովեմ ձեր փառքն անսման:

Բայց եւ ինչպէ՞ս լռեմ հիմա, ինչպէ՞ս լռե իմ բերան,  
Վերիշէլով Սարտարապատ, Ղարաքիլիսա, Աբարան,  
Դուք գնացիք, սակայն ինչպէ՞ս իմ լուռ հոգին այսուհետ

Չխօսի ձեր շուքի հետ:

Ահա այս վեհ ռազմադաշտում, որտեղ լսուեց մի մեծ օր,  
Երբ որ մահը մեռցնելու դուք գնացիք մահի դէմ,  
Եւ դուք գտաք ձեր պտրածը ՎՆ ձեզ համար՝ մահ չարութիւն,

Յայրենիքին՝ փրկութիւն:

Եւ այլ ի՞նչ բան պիտի սազեր հերոսական ձեր սրտին,  
Բուն այդ կատակն օրհասական հանդէպ մահուան գոռ սաստին.

Ո՞վ աւելի արհամարհեց, տեսաւ մահը չմեռած,

Եւ մեռնելիս չդողաց:

Ահա այս վեհ ռազմադաշտում, որտեղ լսուեց մի մեծ օր  
Ձեր ռազմական խրոխտ գոչը վերջին գոչը փրկութեան՝  
Մենք երկու տօն ունենք այսօր ՎՆ մէկ՝ ձեր տօնը «սգաւոր»,

Մէկ՝ մեր սուգը խնդութեան:

Ահա ուժգին որոտում է ժողովուրդը ամբոխուած.

Ձեր խնկելի շուքերի հետ, ռազմադաշտում հայրենի.

Ահա կարմիր դրօշակներ՝ ձեր արիւնով կարմրած

Եւ արիւնով բիւրերի:

Դուք յաղթեցիք, ո՞վ ընկածներ, մահուամբ գմահ կոխեցիք,

Դուք յաղթեցիք եւ չթողիք ոչինչ էլի յաղթելու,

Մկրտուեցիք դուք մահի մէջ, մահուամբ՝ դառաք գեղեցիկ,

Ձեզ փա՛ռք յաւետ, ալելու՛հ:

(Երեւան, 1918 Յունիսի 15,  
»Յայաստան Աշխատաւոր«)

## ՍԱՐԴԱՐԱՊԱՏ

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ  
(1924-1971)

Երբ չի մնում ելք ու ճար  
Խենթերն են, գտնում հնար:  
Այսպես ծագեց, արեգակեց  
Սարդարապատի մարտը մեծ:

Չանգեր դողանջեք,  
Սրբազան քաջերին կանչեք  
Այս արդար պատից:  
Սերունդներ, դուք ձեզ ճանաչեք  
Սարդարապատից:

Աւարայրից ջանք առանք  
Այստեղ մի պահ կանգ առանք,  
Որ շունչ առած՝ շունչներս տանք,  
Սարդարապատի պատի տակ:

Բայց մենք չընկանք, մենք միշտ կանք,  
Մենք չհանգանք, դեռ կը գանք,  
Երբ տան զանգը, ահագանգը,  
Որ մեր հոգու պարտքը տանք:

7րդ կարգ  
ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

ԱԲԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ  
(1875-1957)

Դու, երկնամերձ իմ հայրենիք, դու, հինաւուրց իմ Հայաստան.  
Անմահ բանի սպասարկու, խորհուրդ խորին իմ Հայասան,  
Դու ալեւոր տեսիլների աստեղագծ՝ իմ Հայաստան,  
Եւ նոր խօսքի աւետաբեր, հազարավերջ իմ Հայաստան:

Սաղաւարտներ դրած կանգնած, քու լեռների կուռ երկաթի  
Արօտների արհնազանգ՝ արդարութեան ցորեն արտի,  
Երդիքների ծուխերն անուշ՝ նուիրական Նաւասարդի  
Հին օրերի երգ սրբազան, սեղան զոհի իմ Հայաստան:

Կռունկների համբաւ տանող պանդուխտներիդ աշխարհալած,  
Նահատակուած տաճարներիդ գմբէթները երկնասլաց,  
Մագաղաթների արհնաներկ՝ ձայն մեծութեան, հառաչանաց,  
Հնուց ուխտի վկայարան, աւանդատուն, իմ Հայաստան:

Արդարախօս ու մեծասքանչ քո հին լեզուով օրհներգուած,  
Լուսաւորչի լոյս կանթեղով երկինքների լուսերանգուած,  
Անճառելի ու դարերի տանջանքներով հոգիացած,  
Հրաշափառ քո յարութեամբ՝ նորամանուկ իմ Հայաստան:

Տրդ կարգ

Աղետի Օրերին

ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ

Ես չգիտեմ ՎՆ որեւէ տեղ գրուե՞լ է արդեօք Գեորգ Դ. Կաթողիկոսի այն խիզախ քայլի մասին, որ կատարել է նա 1918 թուի թուրքերի արշաւանքի ժամանակ:

Այս կաթողիկոսի մասին խօսում էին սովորաբար հեգնանքով, որ թոյլ եւ անհամարձակ, Էկոիստ մարդ է: Շատ հաւանական է: Բոլոր մարդիկ քաջ չեն լինում: Բայց ահա 18 թուին թուրքերը, Կարսը եւ Ալեքսանդրապոլը գրաւելուց յետոյ, շարժւում են դեպի Սարդարապատ՝ Երեւանը եւս գրաւելու. հայոց զօրքի գլխաւոր հրամանատար Նազարբեկովը Էջմիածին է ուղարկում գէներալ Սիլիկեանին մի երկու մարդու հետ, որ կաթողիկոսին առաջարկեն՝ հեռանայ վերահաս վտանգից. գնայ Բիւրական կամ Սեւան:

Երբ Սիլիկեանը, տեղ հասնելով ու վտանգը նկարագրելով, անում է իր առաջարկը՝ ծերունի կաթողիկոսը վեր է կենում իր գահից եւ ասում.

- Ես ոչ մի տեղ չեմ գնայ, գէներալ: Ես իմ ժողովրդից չեմ հեռանայ: Թող թուրքերն իմ դիակի վրայով մտնեն Էջմիածին: Եթէ դուք չէք կարող պաշտպանել մեր հայրենի սրբութիւնը, ես կը պաշտպանեմ:

Գէներալը դա համարում է գեղեցիկ խօսք եւ հարցնում է տակտով:

- Իսկ միաբանութիւնն ի՞նչ կարծիք ունի, վեհափառ: Նա կը ցանկանա՞յ, որ դուք մնաք վտանգի առաջ:

- Ես, գէներալ, արտայայտեցի իմ համոզումը: Իսկ եթէ կամենում էք լսել միաբանութեան կարծիքը, հիմա կը հրաւիրեմ նոցա...

Ու կաթողիկոսը կարգադրում է դիւանապետին.

- Ողջ միաբանութիւնը հրաւիրիր վեհարան...

Եւ երբ բոլորը, արքեպիսկոպոսներից սկսած մինչեւ աբեղաները, հաւաքւում են, ծերունի կաթողիկոսը յայտնում է նրանց սպասուող վտանգը եւ իր որոշումը:

- Ես անձնապէս չեմ հեռանալու: Թող թշնամին իմ դիակի վրայով մտնի մեր սրբարանը... Դուք ամենքդ ազատ էք անելու այն, ինչ կամենում էք...

Այս խօսքերն առաջ են բերում անսպասելի իրարանցում: Հանգիստ բազմութիւնը, արքեպիսկոպոսներից մինչեւ աբեղաները, ձեռք են բարձրացնում եւ խօսում յուզուած.- Մենք քեզ հետ ենք, վեհափառ... Մենք նոյնպէս ոչ մի տեղ չենք գնայ... Ո՛չ մի դէպքում...

- Որ այդպէս է, եղբայրներ,- ասում է կաթողիկոսը,- այսօրուանից իւրաքանչիւրդ պետք է դառնաք մի-մի Ղեւոնդ Երեց եւ գնաք խրախուսէք զօրքին ու ժողովրդին... Ու ամէն տեղ՝ գիւղում թէ քաղաքում, քաշեցէք եկեղեցիների զանգերը, քաշեցէք գիշեր ու ցերեկ, որ ամէնքը ոտքի ելնեն իրենց տունն ու հայրենիքը պաշտպանելու...

Այդպէս էլ լինում է. Վեհարանից դուրս գալով՝ հոգեւոր հայրերից իւրաքանչիւրն շտապում է մի որեւէ վայր՝ իր պարտքը կատարելու...

Երկու ժամ յետոյ հնչում են զանգերը:

Միաբանութեան անդամներից ով ի՞նչ է արել այդ ծանր, օրհասական դէպքերի մէջ ՎՆ ինձ յայտնի չէ: Բայց ճեմարանի տեսուչ Գարեգին Եպիսկոպոսի մասին պատմում են հետեւեալը:

Նա Էջմիածնից գնում է ուղիղ Սարդարապատ, այնտեղ, ուր հայոց զօրքի մնացորդները հաւաքուել են թշնամուն դիմագրաւելու:

Ընկճուած տրամադրութիւն է: Չինուորները, գիւղերից, Երեւանից եկած կամաւորները մտահոգ են. թշնամին գալիս է մեծ ուժերով ՎՆ կարող են գոնէ կանգնեցնել նրան: Այդ պատճառով հռետորներին լսում են անուշադիր, ակամայ: Նրանց՝ հռետորների խրախուսանքի խօսքերը չեն ոգեւորում ոչ ոքի: Շատ են լսել «հայրենիք, ժողովուրդ, հայրենասիրութիւն»... Ոչինչ չի ազդում կարծես...

Յինգ-վեց հռետորից յետոյ ելոյթ է ունենում Գարեգին Եպիսկոպոսը:  
Ու սկսում է այսպէս.

- Յայ ժողովուրդը, օրհասական կռիւներ շատ է ունեցել եւ միշտ էլ ելք է գտել ու փրկել իրեն: Ելքը եղել է անձնագոհ հերոսութիւն... Ետ նայեցէ՛ք ՎՆ մեզ մնացել է միայն Երեւանն ու Էջմիածինը... Եթէ հերոսութեան չգիմենք - ամեն ինչ կորչելու է ի սպառ. այլեւս չի լինի ոչ հայ, ոչ հայի հայրենիք...

Այդ ժամանակ հայրենասէր Եպիսկոպոսն ասում է.

- Յայրենակիցներ, եղբայրներ եւ որդիներ. հին դարերում, երբ հայոց զօրքը պատրաստում էր գնալ թշնամու դէմ ՎՆ նրա հրամանատարները գալիս էին Էջմիածին՝ կաթողիկոսի մօտ, նրա աջը համբուրելու եւ օրհնութիւնն առնելու: Բայց այս անգամ վտանգն այնքան մեծ է եւ ահաւոր, որ ես ահա սուրբ Էջմիածնից եկել եմ ձեր բոլորի ձեռքը համբուրելու, որ փրկէք հայրենիքը... փրկէք ձեր պատիւը, հայի պատիւը...

Եւ արտասւում է:

Կատարում է անսպասելի մի բան. անշարժ զօրքը նոյնպէս արտասւում է եւ տարերային թափով գնում առաջ...

Լինում են խօսքեր, որ իսկոյն զարկում են մարդկանց սրտին, անգամ անտարբեր մարդոց սրտին եւ վառում բազմութիւնները:

Այս դէպքում զօրքի վրայ ցնցող տպաւորութիւն է անում Եպիսկոպոսի այն խօսքը, միանգամայն անսովոր խօսքը,- ասում էր ինձ պատմողը,- թէ  
»Էջմիածնից եկել եմ **ձեր բոլորի ձեռքը համբուրելու**, որ փրկէք մեր հայրենիքը«...

Չօրքի, զինուորների եւ կամաւորների գիտակցութեանն է հասնում, որ վտանգն այնքան մեծ է, որ ձեր Եպիսկոպոսն եկել է իրենց ձեռքը համբուրելու... իրենց օգնութիւնն է խնդրում... Դա խթանում է նրանց մարդկային արժանապատուութիւնը եւ նրանք գնում են մեռնելու...

Յետեւանքը յայտնի է. փոքրաթիւ հայ զինուած ուժերը դիմագրաւում են թշնամու մեծաքանակ զօրքին եւ վանում մինչեւ Ալեքսանդրապոլ:

Ոգեւորութիւնն այնքան մեծ է լինում, որ գեներալ Սիլիկեանն այդ ուժերով ուզում է մտնել Ալեքսանդրապոլ, որը գտնւում էր թուրքերի ձեռքին: Բայց նրան զգուշացնում են Երեւանից - առայժմ գոհանալ կատարուածով եւ նոր կռուի մէջ չմտնել... մինչեւ կը հասնի յարմար պահը... որովհետեւ այդ ժամանակ բանակցութիւններ էին տեղի ունենում թուրքերի հետ Պաթումում:

Եւ ինչ էլ գրեն Սարդարապատի կռուի մասին, այսինքն՝ հայերի յաղթանակի մասին՝ չպետք է մոռանալ ծերունի կաթողիկոս Գեորգ Դ.ի, գիտնական-Եպիսկոպոս Գարեգին Յովսէփեանի եւ հայրենասէր հոգեւորականների հերոսական գործը:

Ես, գոնէ, ամեն անգամ նրանց արածը յիշելիս, յուզւում եմ մինչեւ սրտիս խորքը եւ հազիւ եմ զսպում արցունքս...

